ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ

Նիստի անցկացման օրը, ժամը
07.12.2023թ. ժամը՝ 11:00

Նիստի անցկացման վայր՝
Էկոնոմիկայի նախարարության կոլեգիայի դահլիճ

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Խորհրդի անդամներ

1.	Հրաչյա Զաքոյան	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
2.	Արամ Խաչատրյան	«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ
3.	Հայկազ Ֆանյան	«Սոցիալ-Տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամ
4.	Լուսինե Մնացականյան	«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն
5.	Ինգա Հարությունյան	«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն
6.	Կարեն Զաքարյան	«Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն

Հրավիրված անձինք

7.	Լուսինե Սարգսյան	Բրիտանական դեսպանատուն Երևանում
8.	Արման Պողոսյան	Ֆինանսների նախարարի տեղակալ

9.	Լեռնիկ Հարությանյան	Պետական եկամուտների կոմիտեի վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության պետ
10.	Մարգարիտա Զալիբեկյան	Արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչության պետ
11	Անուշ Խուդոյան	ՏԿԵՆ տարածքային ծրագրերի և մշտադիտարկման բաժնի պետ

Քարտուղարության անդամներ

12.	Հովսեփ Պատվականյան	ՎՁԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ղեկավար
13.	Հայկ Մալխասյան	ՎՁԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու
14	Դավիթ Աղաջանյան	ՎՁԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ
15.	Ռուբեն Սարուխանյան	ՎՁԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի տնտեսագետ, տնտեսագետ
16.	Վիկտորիա Կամարյան	ՎՁԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի գրասենյակի համակարգող
17.	Հասմիկ Տոնապետյան	ՎՁԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի գրասենյակի հանրային կապերի պատասխանատու

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Հարց 1. Նախորդ նիստի ընթացքում ընդունված որոշումների կատարման մասին զեկուցում՝

- Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից շահաբաժինների վճարման կարգավորումների պարզեցում *(««Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ),*
- Հեռավար և համակցված հեռավար եղանակով աշխատանքի կանխատեսելի և ճկուն օրենսդրական կարգավորումների ներդրում *(«ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ),*
- Առևտրային ցանցերի և մատակարար կազմակերպությունների միջև վճարային պարտավորությունների չկատարումը կանխարգելող կարգավորումներ,
- Մշակող արդյունաբերության ոլորտի ընկերությունների կողմից նոր աշխատողների՝ այդ թվում աշխատանքային փորձ չունեցող կամ վերաորակավորման կարիք ունեցող անձանց ներգրավումը և աշխատանքային պայմաններում ուսուցումը խրախուսող միջոցառում,
- Բազմամյա տնկարկների հիմնման նպատակով համայնքային հողերի վարձակալության ժամկետի վերանայում *(«ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ)*
- Հարկային օրենսգրքում փոփոխությունների փաթեթ՝ բիզնեսի կողմից ԲՈՒՀ-երին, միջին մասնագիտական և հանրակրթական հաստատություններին նվիրաբերությունների ծավալը մեծացնելու նպատակով *(««ՀՀ հարկային օրենսգրքում» փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ),*
- ՍԵՅՖ *(Simple Agreement for Future Equity - SAFE)* պայմանագրերի համար իրավակարգավորող դաշտի ստեղծում *(««Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ),*
- Օպցիոնի պայմանագրի հասկացության և դրա կիրառման հիմնական պայմանների սահմանում, օպցիոնի պայմանագրերի համար իրավակարգավորող դաշտի ստեղծում *(««ՀՀ քաղաքացիական օրենսգրքում», «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ)*
- Գործատուի կողմից օրենքով սահմանված կարգով աշխատավարձ չհաշվարկելու կամ չվճարելու դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված պատասխանատվության վերանայման հնարավորություն *(«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ)*
- ՀԴՄ կտրոնների վրա ԱՏԳԱԱ կամ ԱԴԳՏ կոդերի սխալ տպագրման դեպքում *(իրականությանը համապատասխանող ապրանքի անվանման տպագրման պայմաններում)* ՀԴՄ-ի կիրառման կանոնների խախտման համար նախատեսված տուգանքի նվազ չափի սահմանում*: («Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ)*
- Աշխատանքային պայմանագրերի շտեմարանի ստեղծում *(ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ)*

● Գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման *(*ֆակտորինգի*)* պայմանագրի կնքման համար իրավակարգավորումների ներդրում *(«*ՀՀ կառավարության *2017* թվականի մայիսի *4*-ի *N 526*-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին*»* ՀՀ կառավարության որոշման նախագիծ*):*

Հարց 2. Այլընտրանքային լոգիստիկ ուղիների զարգացման հիմնախնդիրների քննարկում:

Հարց 3. Մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքներ ունեցող (հարկային արտոնություններ ստացած) սահմանամերձ համայնքների ցանկը լրացնելու մասին («ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 30-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում):

ՓՄՁ զարգացման ենթախորհրդի նիստը նախագահում էր Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը: Պարոն Քերոբյանը ողջույնի խոսքից հետ անդրադարձ կատարեց ենթախորհրդի մասնակիցների, մասնավորապես «Սոցիալ-Տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամի ղեկավար Հայկազ Ֆանյանի առաջարկին՝ ենթախորհրդի հարցերի շուրջ նիստի մասնակիցների կողմից քվեարկելու անհրաժեշտության և նշվածը արձանագրությամբ ամրագրելու հետ կապված հարցերի վերաբերյալ:

Պարոն Քերոբյանը նշեց, որ պետք է հասկանալ, թե առաջարկի ընդունումը ինչ է տալու: Պետք չէ ակնկալել, որ քվեարկության առաջարկվող ձևաչափի ներմուծման հանգամանքում, մասնակից պետական կառույցների ներկայացուցիչների քվեարկության արդյունքները կարող են դիտարկվել որպես այդ կառույցների վերջնական պաշտոնական դիրքորոշում: Նշվածը նշանակում է, որ հարցերի շրջանառման փուլում դրանք կարող են ենթարկվել փոփոխությունների: Բացի այդ, ենթախորհրդի օրակարգային բոլոր հարցերն էլ, իհարկե, բիզնեսի համար կարևոր նշանակություն ունեցող հարցեր են, սակայն ոչ բոլոր հարցերը կարող են արագ լուծումներ ստանալ կամ գուցե նպատակահարմար է այլ լուծումներ գտնել: Պարոն Քերոբյանը առաջարկեց վերոհիշյալը դիտարկել հարցերի լուծման արդյունավետության բարձրացման և ոչ թե տեխնիկական ձևակերպման տեսանկյունից:

Միաժամանակ, պարոն Քերոբյանը նպատակահարմար համարեց ներդնել խորհրդի և ենթախորհրդի նիստերի տարեկան կտրվածքով՝ ներառյալ դրանց շրջանակում քննարկված, դեռևս չստացած կամ արդեն իսկ լուծումներ հարցերի հաշվառման պրակտիկա, ինչը թույլ կտա հասկանալ հարթակի աշխատանքի զարգացման դինամիկան: Քվեարկության հարցի վերաբերյալ որոշ պարզաբանումներ ներկայացրեց Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանը: Վերջինս նշեց, որ խորհրդի/ենթախորհրդի քննարկմանը ներկայացվող բոլոր հարցերի հետագա ընթացքի հետ կապված որոշումները կայացվում են կոնսենսուսի առկայության հանգամանքում և դա ապահովելու նպատակով ներդրումային խորհուրդը քննարկումներ է իրականացնում խորհրդի/ենթախորհրդի ինչպես անդամների, այնպես էլ շահագրգիռ կառույցների հետ:

Այնուհետև, պարոն Քերոբյանի առաջարկությամբ, առաջնորդվելով ընդունված կանոնակարգով, խոսքը փոխանցվեց օրակարգային ՎՁԵԲ Հայաստանի ներդրումային

խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանին, ով ներկայացրեց օրակարգային հարցերը՝ նշելով, որ դրանք երեքն են:

ՀԱՐՑ 1. Հարցի ներքո քննարկվող՝

- **Աշխատանքային պայմանագրերի շտեմարանի ստեղծում (ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ).** Աշխատանքային պայմանագրերի շտեմարանի ստեղծման հետ կապված նիստի մասնակիցների կողմից կարևորվեց աշխատանքային պայմանագրերի գեներացման, ինչպես նաև պաշտոնների և զբաղմունքների միասնական դասակարգչի առցանց համակարգի ներդրման հարցը: Այդ համատեքստում պարոն Քերոբյանը նշեց, որ նշվածը թույլ կտա սինխրոնիզացնել և ստանդարտացնել՝ մասնագիտությունների համար անհրաժեշտ հմտությունների, օրինակ՝ լեզուների իմացության, ըստ աշխատանքի բարդության վաճառողի ըստ մակարդակի տարանջատման և այլնի մասով պահանջների/պաշտոնի նկարագրությունները, ինչն էլ իր հերթին կհեշտացնի գործատուի՝ պահանջարկի լրացման հարցը: Այդ գործընթացները կարևորեց նաև «Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» ՀԿ–ն ներկայացնող Լուսինե Մնացականյանը, ով նշեց, որ պետության կողմից այդ շտեմարանների՝ օրինակ՝ աշխատանքի նկարագրություններ, պարզագույն պայմանագրեր, ստեղծումը կօգնի բիզնեսին, հատկապես բավականաչափ ֆինանսական ռեսուրսներ չունեցողներին՝ համապատասխան փորձագետներ ներգրավելու հարցում: Վերջիններս կարող են օգտվել նման շտեմարաններից:

Հաշվի առնելով քննարկման արդյունքները պարոն Քերոբյանը Հայաստանի ներդրումային խորհրդին առաջարկեց՝ Ստանդարտ պայմանագրերի շտեմարանի մասով իրականացնել միջազգային փորձի ուսումնասիրություն:

- Գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի կնքման համար իրավակարգավորումների ներդրում («ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ):

ՊԵԿ նախագահի տեղակալ Արման Պողոսյանի և ՊԵԿ վարչության պետ Լեռնիկ Հարությունյանի կողմից բարձրացված՝ նախագծի՝ հարկման տեսանկյունից եկամուտ ճանաչելու պահի ձևակերպման հստակեցման պահանջի շուրջ իրենց տեսակետները հայտնեցին Էկոնոմիկայի Վահան Քերոբյանը, նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը, ՎՁԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանը, ենթախորհրդի անդամները: Քննարկման արդյունքներով ՎՁԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանը ներկայացրեց առաջարկություն, համաձայն որի նախագծի դիտարկվող կարգավորման մասով ՊԵԿ ներկայացուցիչների դիտարկումների հիման վրա կմշակվի նախագծային առաջարկ: Այնուհետ այն աշխատանքային կարգով ևս մեկ անգամ այն կներկայացվի ՊԵԿ քննարկմանը:

ՀԱՐՑ 2. ՎՁԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանի զեկուցմամբ ներկայացվեց այլընտրանքային լոգիստիկ ուղիների զարգացման հիմնախնդիրների հետ կապված ՎՁԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքները: Համաձայն ներկայացման,

արտահանումը դեռեւս լիովին իրացված չէ՝ նպատակային շուկաներ հասցնելու տրանսպորտային բարձր ծախսերի պատճառով: Շեշտը դրվել է ՓՄՁ ոլորտի արտադրողների կողմից արտադրվող ապրանքների արտահանման ներուժի վրա: Հայաստանի համար ներկայում գործում են մեկ տեսակի և մուլտիմոդալ լոգիստիկ երթուղիներ, օրինակ՝ բեռնատարով Վրաստան-Լարսով դեպի Ռուսաստանի Դաշնություն եւ ԵԱՏՄ երկրներ կամ բեռնատարով Վրաստան-Փոթի/Բաթում եւ նավերով դեպի ԵՄ/Ռուսաստան/աշխարհ:

Այս երթուղիներն ունեն որոշակի թերություններ, ինչպիսիք են անկանխատեսելիությունը/անորոշությունը ձմռան եղանակային պայմանների, սեզոնային ծանրաբեռնվածության մակարդակը, անորոշությունը բարձր ծախսերի եւ մաքսային ընթացակարգերի պատճառով:

Այսպես օրինակ, համաձայն ուսումնասիրության, Հայաստանի շուկայի համեմատաբար փոքր չափը, իր չորս հարևաններից երկուսի՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ փակ սահմանները, ինչպես նաև Իրանի հետ սահմանափակ կապն ու այդ երկրի նկատմամբ սահմանված միջազգային պատժամիջոցները մեծապես դժվարացնում են երկրի մուտքը դեպի միջազգային միջանցքներ ու շուկաներ՝ ազդելով առևտրի և տնտեսական աճի վրա: Նման պայմաններում, Հայաստանի արտաքին առևտուրը զգալի չափով հենվում են հյուսիսային հարևան Վրաստանով անցնող բեռնափոխադրումների միջանցքների վրա: Սակայն կան բազմաթիվ խնդիրներ՝ Փոթի-Բուրգաս, Փոթի-Կոնստանցա ուղղությամբ բեռնափոխադրումները իրականացվում են: շաբաթական մեկ անգամ, արագ փչացող ապրանքները (հատապտուղ) չեն կարող օգտվել, բեռնատար վարորդների վիզաների խնդիր, EURO-5 ստանդարտներին համապատասխան մեքենաների սակավությունը, խմիչքների պարագայում հնարավոր է նավով փոխադրման թանկացում մինչև 25%:

Հարավային հարևան Իրանով անցնող միջանցքների դերն ավելի փոքր է: Համաձայն ներկայացման ՀՀ տնտեսվարողների համար Իրանով արտահանման դեպքում ամենամեծ խնդիրը կայանում է նրանում, որ գործող շատ կանոններ ու ընթացակարգեր հստակ չեն և այդ պատճառով միշտ առկա է ապրանքների առգրավման ռիսկը: Օդային բեռնափոխադրումների տարբերակը ևս հասանելի է, սակայն այն բավարար չափով զարգացած չէ ապրանքների մեծամասնության համար կենսունակ այլընտրանք դիտվելու տեսանկյունից: Միայն Air Cargo իրականացնում են Coyne Airways Yerevan-Liege-Yerevan, Lufthansa Yerevan-Frankfurt-Yerevan: Օդային փոխադրումներով ներմուծման հարցում, կարծես թե, խնդիրներ չկան, ինչը չի կարելի ասել արտահանման դեպքում, այն կազմում է ներմուծման մոտ 15%-ը: 1 կգ բեռնափոխադրում անկախ ծավալից կազմում է 5 եվրո, 1 տոննա = 5000 եվրո, 22 տոննա = 110,000 եվրո: Համեմատության համար, 22 տոննա բեռնափոխադրումը Փարիզ արժի 9575 եվրո: Դեպի ԵՄ երկրներ արտահանվում են հիմնականում ադամանդներ, ինժեներական արտադրանք, բարձրարժեք տեքստիլ, պանիր, գինի:

Համաձայն ՎՁԵԲ փորձագիտական թիմի՝ Հայաստանից արտահանման վրա ներկայացված առաջարկությունների ազդեցության գնահատման ժամանակ դիտարկվել են մի շարք գործակիցներ, ինչպես օրինակ տրանսպորտային ծախսերը, գործընկեր երկրի համախառն ներքին արդյունքի մեծությունը, հուսալիությունը եւ այլն: Օրինակ, ըստ գնահատականների, տրանսպորտային ծախսերի 1% նվազումը կարող է հանգեցնել

արտահանման ծավալների մինչեւ 1,738% աճի՝ արտահանման ներուժ ունեցող բացահայտված ապրանքային խմբերի համար: Հետեւաբար, դեպի Փոթի կամ Բաթումի կանոնավոր կոնտեյներներով երկաթուղային փոխադրումների կազմակերպման եւ պետական աջակցության պարագայում արտահանման ծախսերի 5% նվազեցումը կարող է հանգեցնել արտահանման մինչեւ 8,69% աճի՝ ընտրված ապրանքային խմբերի համար»,- ասված է հաղորդագրությունում:

Նշված խնդիրները կարևորվում են մի քանի տեսանկյունից, քանի որ դրանց լուծումները կապահովեն Հայաստանի համար նշանակալի ձեռքբերումներ, այդ թվում՝ տնտեսական աճ, դիվերսիֆիկացիա, նոր շուկաների հասանելիություն և մրցունակության բարձրացում:

Վերոհիշյալ խնդիրների լուծման համատեքստում ներկայացվեց երեք լուծում, որոնցից առաջինով առաջարկվում էր Փոթի-Բուրգաս, Փոթի-Կոնստանցա ուղղությամբ բեռնափոխադրումների հետ կապված ծախսերի մասով պետական աջակցության տրամադրում, որը համաձայն ՎՁԵԲ ղեկավարի Հովսեփ Պատվականյանի՝ լուծելու է ընդամենը ոչ մեծ թվով արտահանողների՝ ԵՄ արտահանման հետ կապված խնդիրները, երկրորդ տարբերակով որպես լուծում առաջարկվում էր ՀՀ կառավարության կողմից բեռնատար ինքնաթիռ ձեռք բերելը, որի օպերատորը կնշանակվի ՀՀ կողմից, սակայն այն գտնվելու է այլ երկրի իրավասության ներքո:

Այս առնչության Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը հայտնեց, որ առաջարկվող տարբերակները քննարկելուց առաջ պետք է հասկանալ դրանց կիրառման ազդեցությունը արտահանման շուկաների և ապրանքային կազմի դիվերսիֆիկացման, ապրանքային զամբյուղի բազմազանության և բարդության մակարդակի ավելացման վրա: Պարոն Քերոբյանը նշեց, որ նմանատիպ տեսանկյունից պետք է դիտարկել նաև Փոթի-Բուրգաս, Փոթի-Կոնստանցա ուղղությամբ բեռնափոխադրումների հետ կապված ծախսերի մասով պետական աջակցության տրամադրման հնարավոր ազդեցությունը արտահանման կառուցվածքի և ծավալների վրա: Պարոն Քերոբյանը տեսակետ հայտնեց, որ չնայած ուսումնասիրության արդյունքներով ձևավորված եզրահանգումների առ այն, որ ավիաբեռնափոխադրումները հիմնականում օգտագործվում են արժեքավոր, կոտրվող և փոքր ծավալներով բեռների փոխադրման համար, կարիք կա ուսումնասիրելու նաև այդ ուղիով արտահանման ծավալի մեծացման դեպքում գնի նվազման հնարավորությունները: Համաձայն վերջինիս, եթե բեռնափոխադրող ավիաընկերությունները հստակ իմանան, որ որոշակի ծավալով և որոշակի պարբերականության ապրանքների արտահանում է լինելու, ապա կարող են վերանայել իրենց ընկերությունների գնային քաղաքականությունը:

ՈՐՈՇՎԵՑ

Քննարկումների արդյունքներով Ենթախորհրդի նախագահ Վահան Քերոբյանն առաջարկեց Հայաստանի ներդրումային խորհրդին Lufthansa Cargo AG ընկերության հետ քննարկել վերջինիս բեռնափոխադրումների գնագոյացման մեխանիզմները, բեռնափոխադրումների ծավալի մեծացման հանգամանքում գնի նվազեցման տեսանկյունից հնարավոր տարբերակները հասկանալու համար:

Միաժամանակ պարոն Քերոբյանը հայտնեց, որ առավել նպատակահարմար կլիներ, որ առաջարկվող լուծումները՝ դիտարկվեին Առևտրի համաշխարհային կազմակերպության

կանոններին, ինչպես նաև գործող միջազգային մի շարք սահմանափակումներին չհակասելու համատեքստում :

ՀԱՐՑ 3. ՎՀԵԲ Մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքներ ունեցող (հարկային արտոնություններ ստացած) սահմանամերձ համայնքների ցանկը լրացնելու մասին («ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 30-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում):
Հարցի հետ կապված ՊԵԿ դիրքորոշման վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց ՊԵԿ նախագահի տեղակալ Արման Պողոսյանը, ով հայտնեց, որ 2018–ին կատարված՝ Սահմանամերձ բնակավայրերում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին ՀՀ օրենքի փոփոխությունը կատարվել էր նույն տրամաբանությամբ՝ մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքներ ունեցող սահմանամերձ բնակավայրերում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու նպատակով: Սակայն ներկայիս իրողությունների պայմաններում ստացվել է այնպես, որ ՀՀ արևելյան սահմանագիծը էականորեն ընդլայնվել է և զուտ աշխարհագրորեն սահմանամերձ բնակավայրերը դիտարկելու դեպքում ստացվում է, որ հանրապետության մի զգալի մասը դառնալու է հարկերից ազատված գոտի: Այս իրավիճակում հարկման նպատակով բնակավայրերի առանձնացումն, ինքնըստինքյան, կարող է խնդիրներ առաջացնել հավասար մրցակցային պայմաններ ապահովելու տեսանկյունից և, ըստ էության, դրանց սահմանման արդյունքում միևնույն գործունեությամբ զբաղվող, սակայն տարբեր տարածաշրջաններում փաստացի գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների միջև կստեղծվեն հարկման անհավասար պայմաններ, ինչը չի բխում հարկման արդարության ու հավասարության սկզբունքից:

Համաձայն պարոն Պողոսյանի, այս խնդիրները կային նաև նախորդ մոդելի ժամանակ, սակայն անհամեմատ փոքր էին, իսկ ներքին միգրացիայի պայմաններում ավելի մեծ խնդիրներ կարող են առաջանալ: Պարոն Պողոսյանը նաև նշեց, որ չնայած վերոհիշյալին, դա չի նշանակում, որ ՊԵԿ–ը չի գիտակցում սահմանամերձ բնակավայրերի առջև ծառացած խնդիրները և եթե նույնիսկ Էկոնոմիկայի նախարարությունը նախաձեռնությամբ հանդես չգար, ՊԵԿ–ը հանդես կգար համապատասխան նախաձեռնությամբ: ՊԵԿ–ն առաջարկում է զուտ վերահիմաստավորվել առաջարկվող աջակցության գործիքը, որպեսզի այն չդիտարկվի զուտ աշխարհագրորեն, այլ ուղղված լինի անվտանգային առումով առավել խոցելի համայնքներին: Պարոն Արման Պողոսյանը հայտնեց իր դիրքորոշումն առ այն, որ պետք է համալիր մոտեցում ցուցաբերել՝ մշակելով նաև հասցեական աջակցության գործիքակազմ:

Այս առնչությամբ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանն առաջարկեց դիտարկել խնդրի լուծումը այլ տեսանկյունից՝ ֆիսկալ ապակենտրոնացման միջոցով տեղական ինքնակառավարման մարմիններին տալ, օրինակ շահութահարկի կտորը: Այն (հայտարարագրերում կատարելով որոշակի փոփոխություն) կարող է ուղղվել համայնքային բյուջե և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենք կորոշեն շահութահարկով հարկման բազան: Սա համայնքներին հնարավորություն կտրվի՝ խոցելի համայնքների դեպքում շահութահարկի հարկման բազան են 0–ական կամ բավականին

ցածր սահմանելու, իսկ մյուսների դեպքում՝ համայնքային բյուջե որոշ ֆինանսական միջոցների մուտքի ավելացման պայմաններում լուծելու համայնքային կարևորության այլ հարցեր: Նիստի մասնակիցները, մասնավորապես «Սոցիալ-Տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամի ղեկավար Հայկազ Ֆանյանն ու ՊԵԿ նախագահի տեղակալ Արման Պողոսյանը, գաղափարը բավականին լավ լուծում համարելով հանդերձ նշեցին, որ վերջինիս ներդրումը ժամանակատար է և իրականացնել հնարավոր է երկարաժամկետ հատվածում: Այս առնչությամբ պարոն Գևորգյանը նշեց, որ սահմանամերձ համայնքներում գործող բիզնեսների համար, մասնավորապես օրինակ «Տավուշ տեքստիլ»–ի համար, առավել կենսական է ոչ այնքան հարկային արտոնությունների տրամադրման հարցը, այլ մի շարք այլ հարցերի կարգավորումների մեխանիզմների ներդրումը, մասնավորապես ապահովագրական պոլիսի ապահովման խնդիրը:

ՈՐՈՇՎԵՑ

Ռաֆայել Գևորգյանի առաջարկությամբ որոշվեց՝ սահմանամերձ գոտիների զարգացումը դիտարկել այդ բնակավայրեր ներդրումների համակարգված ներգրավման մեխանիզմների, լոգիստիկ զարգացած ենթակառուցվածքների ստեղծմամբ արդյունաբերական և ազատ տնտեսական գոտիների ստեղծման ճանապարհով: Միաժամանակ շեշտադրվեց բիզնեսի համար գործող արտոնությունների, պետական աջակցության միջոցառումների առավել հանրահռչակման ուղղությամբ աշխատանքների ակտիվացման անհրաժեշտությունը:

Նիստը նախագահող
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

X_____

_____ _____
(ստորագրություն)

Արձանագրությունը կազմեց՝
ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊՄԵ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ՀՌԻՓՍԻՄԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ